հետքը, այն ազդեցութիւնը, ինչ նա կարող էր թողնել և ունենալ՝ եթէ միայն հեթանոսական շրջանն էլ կարողանար ստեղծել արտայայտութեան այն ձևը, որ տուեց մեզ քրիստոնէական շրջանը, եթէ հեթանոսական շրջանն էլ կենսունակ լինէր իր քաղաքակրթութեամբ բարձրացնել ժողովուրդը մինչև ազգային լեզուի կազմակերպութեան անհրաժեշտութեան պահանջը։

Այդ, նախաքրիստոնէական շրջանում հայերը միջոց չունէին ուրոյն կերպով զարգանալ, ստեղծել իրենց քաղաքակրթութիւնը, որովհետև նրանց լեզուն դեռ չէր ստացել հարկաւոր կազմութիւնը, և նրանք շարունակ գտնւում էին իրենց դրացի ազգերի ուժեղ ազդեցութեան տակ և կապկօրէն ընդօրինակում էին, անգիտակցօրէն ընդունում ասորոց, պարսից և յունաց քաղաքակրթութեան արտայայտութիւնները։

Հայ մտաւորականը այդ շրջանում չունէր ուրոյն մտաւոր կեանք. նա ապրում էր երեք ազգերից մէկի մտաւոր կեանքով. իսկ հայ ժողովուրդը՝ ինքնագիտակցութեան զգացմունքից զուրկ՝ կուրօրէն հետևում էր օտար քաղաքակրթութեան շաւղին։

Ճիշտ է, ասորոց, պարսից և յունաց փայլուն զարգացումը, նրանց քաղաքակրթութեան բարձրութիւնը անկարող էր առանց ազդեցութեան անցնել դրացի հայերի վրայ, որոնք համեմատած այդ ժողովրդի հետ միշտ փոքր էին և թոյլ, բայց եթէ հեթանոսական շրջանում հայ ժողովուրդը ունենար կուլտուրական այնպիսի մի զորեղ արտահայտութեան ձև, որպիսին է մայրենի գիրն ու գրականութիւնը, ապա հայ ժողովուրդը վերցնելով դրացի ազգերից նրանց բարձր քաղաքակրթութեան պտուղները կարող կլինէր մարսել այն, վերամշակել և իր քաղաքակրթութեան հետ ձուլել, նրա մի մասը դարձնել, ինչպէս որ արեց յետագոյ—քրիստոնէական շրջանում։

Հեթանոսական շրջանում հայ ժողովուրդը գործ էր ածում իր դրացի ժողովուրդների—ասորոց, պարսից և յունաց գրերը, ապրում նրանց դպրութեամբ։

Սրբ չորրորդ դարու առաջին տարիներին քրիստոնէութիւնը մուտք գործեց հայաստան—նոյն դրութիւնն էր տիրում։

Նոր վարդապետութեան քարոզողները ստիպուած էին օտար լեզուով ուսուցանել—կարդալ Աւետարանը, ժողովրդին անհասկանալի լեզուով աղօթել Աստծուն։ Ս. Լուսաւորիչ և նրա ժառանգներն ու հետևորդները իրենց քարոզչական-վարդապետական ճանապարհորդութիւնների ժամանակ հէնց առաջին քայլից հասկացան մայրենի գրի ու եկեղեցական գրականութեան բացակայութեան պակասը. նրանք ստիպուած էին կարդալ ասորերէն աւետարանը և ապա թարգմանել, հասկացնել հայ ժողովրդին։ Ուսուցանելու այսպիսի ձևը չէր կարող նպաստել քրիստոնէութեան տարածման. և իսկապէս՝ մօտ հարիւր տարի այս նոր վարդապետութեան դէմ յամառ դիմադրութիւն ցոյց տուեց հեթանոսութիւնը և շատ ու շատ զոհեր պահանջեց նրանցից. նոյնիսկ Ս. Գրիգոր Լուսաւորչի սերունդը այդ կռւում տուեց մի շարք նահատակներ՝ ինչպէս են Արիստակէս, Վրդանէս Յուսիկ և այլք։

Քրիստոնէութեան ամրապնդման, նրա վերջնական յաղթանակի համար Հայաստանում՝ անհրաժեշտ էր ժողովրդին հասկանալի լեզուով աւետարան, նրան հարազատ գրերով ժամասացութիւն։

Ահա այդ կարիքի ծնունդն էր հայկական գիրն ու գրականութիւնը, քրիստոնէական քաղաքակրթութեան այդ փայփայած զաւակը։

ՍԲ. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ
ՍԲ. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ

Այսօր տօնում է հայկական տառերի գիւտի 1500 ամեակը և տպագրութեան խօսքի 400-ամեակը։ Անշուշտ բոլորս էլ ծանօթ ենք մեր պատմութեան այդ փայլուն էջերին, գիտենք և ճանաչում ենք ս. Մեսրոպ ու Սահակին, Աբգար դպրին, բայց թող մեզ ներուի այսօր կրկին վերյիշելու այդ նշանաւոր ու մեծ մարդոց անցեալը, տալու այստեղ նրանց մասին կենսագրական՝ թէկուզ շատ համառօտ նկարագիրը։ Չէ՞ որ այսօրուան յոբելեարները նրանք են։

Սբ. Մեսրոպ Մաշտոց

Մեսրոպը Տարօն գաւառի (այժմեան Մուշի) Հացեկաց գիւղի Վարդան չինականի որդին էր։ Նա իր ուսումը ստացել էր Ներսէս Մեծի հիմնած դպրոցներից մէկում և մանկութիւնից վարժուել էր յունաց լեզուին, գիտէր նաև ասորերէն և պարսկերէն։ Երիտասարդ ժա-

մանակում անցնելով Այրարատեան նահանգը Խոսրով III-ի օրով մտել էր զինուորական ծառայութեան, ուր իսկոյն և եթ աչքի էր ընկել ուսումնասիրութեամբ և բարեկիրթ կեանքով։ Շուտով թողնում է զինուորական ծառայութիւնը և ստանձնում Առաւան իշխանի հաղարապետութեան օրով՝ արքունի դիւանապետի պաշտօն։ Բայց այդ պալատական պաշտօնն էլ չգրաւեց նրա ուշադրութիւնը և նա թողեց արքունիքը վանք մտնելու համար։

Այդ միջոցին հայոց կաթողիկոսն էր Ներսէս Մեծի որդի Սահակ Պարթեը, որը Հայաստանի այդ խառնակ ժամանակ իր ամբողջ ուշադրութիւնը կենդրոնացրել էր ժողովրդի մէջ ամրապնդելու քրիստոնէական սէրն ու հաւատը։ Նա սիրով եկեղեցու գիրկն ընդունեց Մեսրոպին և նրա ձեռքը տուեց քարոզչական ցուպը։

Մեսրոպը իր շուրջը ժողովելով մի խումբ աշակերտներ՝ սկսեց շրջել Հայաստանի բոլոր վայրերը, այցելեց ամենավայրենի գաւառները ուսուցանելու Աւետարանի խօսքը։ Բայց իր քարոզչական շրջագայութեամբ նա հանդիպեց մեծ դժուարութիւնների։ Թէև հայերի պաշտօնական կրօնը քրիստոնէութիւնն էր, սակայն նա չէր կարողացել դեռևս ամուր արմատներ ձգել և երկրում տիրում էր կռապաշտական սովորութիւնները։ Մեսրոպը, իբրև զգայուն և խելացի մարդ, զգաց թէ որտեղից է գալիս ամբողջ դժուարութիւնը, իբրև այսպիսի դրութեան պատճառը։

Հայ եկեղեցին չունէր մայրենի դպրութիւն. Նոյնիսկ Աւետարանը կարդացւում էր ասորերէն կամ յունարէն և ապա թարգմանւում ժողովրդին, և որովհետև գրագէտների թիւը շատ սակաւ էր, ուստի և Քրիստոսի վարդապետութեան տարածումը կատարւում էր շատ դանդաղ և ժողովուրդը միջոց չունէր անձամբ ծանօթանալու Ս. Գրքի հետ։ Ահա այդ բոպէից Մեսրոպի մէջ միտք յղացաւ հնարել մայրենի գրեր, ստեղծել ժողովրդի լեզուով եկեղեցական գրականութիւն։

Նա վերադարձաւ Վաղարշապատ և յայտնեց իր մտատանջութիւնները կաթողիկոսին, որին նոյնպէս տանջում էր նոյն միտքը։ Սահակ Պարթեը խորհրդակցեց այդ մասին Վռամշապուհ թագաւորի հետ, որը պատմեց թէ Միջագետք եղած ժամանակ Դանիէլ ասորի եպիսկոպոսի մօտ նա տեսել է հայ լեզուի տառերը։

Վռամշապուհ թագաւորը անուանով Ս. Սահակի և Մեսրոպի թախանձանքներին Միջագետք ուղարկեց արքունիքի պաշտօնեայ Վահրիճ Խադունի, որը Հաբէլ քահանայի օգնութեամբ գտաւ Դանիէլ եպիսկոպոսին և բերեց հայկական գրերը Հայաստան։

Սահակի և Մեսրոպի սկզբնական ուրախութիւնը շուտով տրամութեան փոխուեց, երբ առաջին փորձերից և եթ պարզուեց, որ Դանիէլի մօտի գրերը չեն համապատասխանում հայ լեզուին և որ այդ գրերը մի ինչ որ հին լեզուի գործածութիւնից անցած գրեր են։

Մեսրոպը՝ մի խումբ աշակերտների հետ մեկնեց Միջագետք, յուսալով թէ Դանիէլ եպ. մօտ կը գտնի պակաս հնչիւնները, տառերի մնացորդները։ Բայց Դանիէլի մօտ նոր բան չգտաւ։

Նա իր աշակերտների մի մասը ուղարկեց Սամոսատ քաղաքը՝ յունարէնը ուսումնասիրելու, իսկ ինքը գնաց Եդեսիա, ուր նրան լաւ ընդունելութիւն ցոյց տուին Ակակիոս և Բաբելաս եպիսկոպոսները։ Իր աշակերտներին նա տեղաւորեց տօբական դպրոցներում այդ լեզուն սովորելու, իսկ ինքը անձնատուր եղաւ իր փայփայած մտքին՝ աշխատելով տեղական մատենագարանում։

Ահա այդտեղ նա երկար աշխատանքից ու տքնութիւններից յետոյ գտաւ մեր մայրենի լեզուի գրերը և մեկնելով Սամոսատ՝ յայտնի յոյն գիտնական Հռոփանոսի հետ կարգադրեց հայերէն այբուբենը և իր աշակերտների հետ դարձաւ հայրենիք։

Ցնծութիւնն ընդհանուր էր։ Վաղարշապատում թագաւորը, կաթողիկոսը և ժողովուրդը ընդառաջ ելան մայրենի գրի հեղինակին ցոյց տալով արքայավայել ընդունելութիւն։

Տառերի գիւտի հետ սկսւում է գրական եռանդուն գործունէութիւն, ղեկավարութեամբ Ս. Սահակի և Մեսրոպի։ Անձնապէս Ս. Մեսրոպը հեղինակել է *Մաշտոցը* (ժիսարան), *Ապաշխարութեան շարականները* և այլն։

* * *

Ս. Սահակ Պարթեւ

Սբ. Սահակ Պարթեւ

Սահակ Պարթև Ս. Լուսաւորչի ցեղից էր, Մեծն Ներսէսի որդին։ Նա իր կրթութիւնը ստացել էր Կեսարիայում, ապա Բիւզանդիոնում։ Մատաղ հասակից՝ հօր ազդեցութեան տակ, նրա մէջ արմատ է ձգում կրօնական

ջերմեռանդությունը և ժողովրդին ծառայելու սերը։

Երիտասարդ հասակում նա ամուսնացաւ, Լուսաւորչի սերունդը անժառանգ չթողնելու համար, բայց արու զաւակ չունեցաւ. նրա միակ դուստրը՝ Սահականուշը կնութեան տուեց Համազասպ Մամիկոնեանին, որի որդին էր, ի միջի այլոց, Բաջ Վարդանը։ Բայց կընոջ մահուանից յետոյ կուսակրօնութիւն ընդունեց՝ իր շուրջը ժողովելով 60 չափ աշակերտներ։ Սկզբում ճգնաւորական կեանք էր վարում—ծոմով և աղօթքով անցնում իր օրերը, մաղեղէն էր նրա հագուստը։ Այսպիսի բարոյական ու ջերմեռանդ կեանքը մեծացնում էր Ս. Սահակի հեղինակութիւնը ժողովրդի աչքում, գրաւում ժողովրդի սէրը։ Ուստի Ասպուրակէս կաթողիկոսի մահից յետոյ Խոսրով Գ. Թագաւորի և ժողովրդի միաձայն հաւանութեամբ հայրապետական աթոռը բարձրացաւ նա։

Սակայն քաղաքական դէպքերը յոյն պարսկական մրցութեան պատճառով այնպիսի ընթացք ստացան, որ Խոսրովը՝ լքուած նախարարների կողմից և պարտուած պարսից զօրքից՝ գահընկէց եղաւ, իսկ Ս. Սահակը, Թագաւորին պաշտպանած լինելու համար, զրկուեց հայրապետական աթոռից։ Հայոց Թագաւոր նշանակուեց նրա եղբայր Վռամշապուհը, որի ջանքերով և խոհեմութեամբ Ս. Սահակը նորից բարձրացաւ կաթողիկոսական գահը։

Սակայն մենք չենք տալ այստեղ Ս. Սահակի քաղաքական գործունէութեան պատկերը, որքան էլ այն հետաքրքիր լինի, որովհետև այսօր նա մեզ հետաքրքրում է իբրև Ս. Մեսրոպի գործակիցը տառերի գիւտի ժամանակ և մայրենի գրականութեան գլխաւոր հիմնադիրը։

Երբ Ս. Մեսրոպ մայրենի տառերի անհրաժեշտութեան մասին իր մտքերը յայտնեց Ս. Սահակին, որ այն ժամանակ կաթողիկոս էր, վերջինս Վռամշապուհ Թագաւորի ուշադրութիւնը հրաւիրեց Ս. Մեսրոպի մտատանջութիւնների վրայ։ Եւ Ս. Սահակի միջնորդութեան ու հովանաւորութեան շնորհիւ էր, որ Միջագետք ուղարկեց նախ՝ պալատական պաշտօնեայ Դանիէլ ասորի եպիսկոպոսից հայերէն համարուած գրերը բերելու, և ապա՝ հէնց ինքը Ս. Մեսրոպ իր աշակերտներով տառերի ստեղծագործական աշխատանքներին նուիրուելու։

Տառերի գիւտը արեց Ս. Մեսրոպ, բայց ս. Սահակ տարիներ տևող այդ աշխատանքների ժամանակ այնքան մտիկ ու քաջալերիչ գործակցութիւն է ունեցել մանաւանդ գրական անդրանիկ գործունէութեան ընթացքում, որ այդ երկու տոնունները անբաժան են եղել պատմութեան մէջ և այդպէս էլ կը մնան միշտ։

Տառերի գիւտից անմիջապէս յետոյ, Ս. Սահակի ղեկավարութեամբ սկսւում է թարգմանչական գործունէութիւնը. առաջին գիրքը հայերէն լինում է *Աստուածաշունչը*։ Ս. Սահակի գրչին են պատկանում *Աւագ շաբաթի* քաղցրահիւս չարականների մի մասը, *Պատարագամատոյցը*, *Ժամագրքի* և *Մաշտոցի* աղօթքներից շատերը. *Աշխարհաթաղի* կարգը, *Քահանայաթաղն* ու *Հոգեհանգիստն* էլ թարգմանել է ասորերէնից Ս. Եփրեմի աղօթքներից։ Բացի դրանից ունի խրատական և յորդորական նամակներ, որոնցից ամենանշանաւորն է *Կանոնը* կոչուած գրուածքը, որ Վաղարշապատի ժողովից յետոյ Ս. Սահակ ուղարկեց Հայաստանի զանազան գաւառները. դրանք բաժանուած են վեց գլուխների և ամենալուսաւոր կերպով բացատրում են եպիսկոպոսների, քահանաների, վանականների և այլոց պարտականութիւնները դէպի եկեղեցին ու ժողովուրդը։ Իր գրուածքներում նա սաստիկ յանդիմանում է ուսումնատեցութիւնը, կաշառակերութիւնն ու անգթութիւնը։

Ս. Սահակի բոլոր գործերը աչքի են ընկնում իրենց պարզութեամբ ու մաքուր չեչտով։

Այսպիսով Ս. Սահակ Պարթեը հիմք դրեց հայկական գրականութեան։

ՆՈՒԷՐ «ՀՈՐԻԶՈՆ»-ԻՆ

—

«Հորիզոնը» բարկացել է։ Եւ ինչպէս է բարկացել...

Խեղճ մարդիկ, խեղճ թերթ։

Ես չեմ ծաղրում, այլ անկեղծօրէն ցաւում եմ, խղճում եմ «Հորիզոնին»։

Ես շատ լաւ հասկանում եմ այդ բարկութեան, այդ ջղային հիչերի աստառը։

Մարդիկ աշխատել են, քրտինք են թափել, երդուել-երդմնապատառ են եղել, որ Էջմիածնին տիրեն հէնց այսօրուայ նրա տէրերը, աշխատել են համոզել ամենքին, որ Էջմիածնի և հայ ազգի փրկութիւնը Գէորգ V-ի ընտրութեան և նրա այժմեան շրջապատողների մէջն է և անկարծ...

— На, любуйся...!

«Գեմոկրատ» յայտարարուած Գէորգ V-ը անտակտ է, Էջմիածինը դէպի կորուստ և անկումն է տանում, իսկ նրան շրջապատողները կեղտոտ մարդիկ են, որոնց պէտք է կավաղան բարձրացնել և ոչ թէ եպիսկոպոս ձեռնադրել»...

— «Երկրպագում եմ այն ամենին, ինչի վրայ երէկ թքում էի, և թքում եմ այն ամենի վրայ, ինչին երէկ երկրպագում էի»—«Հորիզոնի» ցուցանակի վրայ խոշոր տառերով պէտք է գրուեն այդ խօսքերը։

Այս առաջին անգամը չէ, այս վերջին անգամը չէ լինելու «Հորիզոնի» կեանքում, երբ նա ցանկանում է այրել իր երեկուայ անցեալը, ամենքիս աչքի առջև կատարուած անցեալը...

Օ՛, ստախօսների յիշողութիւնը կարճ է լինում։ «Հորիզոնը» սուտ էր ասում, երբ մի երկու տարի սրանից առաջ ներբողներ էր գրում Էջմիածնի այժմեան տէրերի հասցէին և նա այսօր արդէն ժառացել է իր երեկուայ ասածները, նա այսօր իր կումիրներին անդունդն է գլորում...

Եւ ոչպիսի կատաղութեամբ, փրփրակալած բերանով...